



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

*<< 09 >> օգոստոսի 2012 թ. N 196-Ն հ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈՐՍԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ  
2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՈՐՍԻ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ և  
ԴՐԱՆՑ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Որսի եվ որսորդական տնտեսության վարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 8-րդ կետով, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի 2012 թ. հուլիսի 26-ի N2459-106 գրությամբ ներկայացված առաջարկությունները

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ բնության հատուկ պահպանվող տարածքներից) թույլատրելի հետևյալ որսատեսակների սիրողական որսը՝

1) յոր - մինչև 35000 հատ, 2012 թ. օգոստոսի 25-ից հոկտեմբերի 31-ը (10 հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ),

2) աղավնիներ (թխակապույտ և անտառային, սովորական տատրակ) - մինչև 9500 հատ, 2012 թ. օգոստոսի 25-ից 2013 թ. հունվարի 31-ը (5 հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ),

3) քարակաքավ - մինչև 1500 հատ, 2012թ. նոյեմբերի 1-ից դեկտեմբերի 31-ը (5 հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ),

4) կոցարազգիներ (բացառությամբ << Կարմիր գրքում գրանցվածների)- մինչև 1500 հատ, 2012թ. օգոստոսի 25-ից հոկտեմբերի 31-ը (5 հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ),

5) արտույտներ (դաշտային, տափաստանային) - մինչև 1500 հատ, 2012թ. օգոստոսի 25-ից հոկտեմբերի 31-ը (5 հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ),

6) սարյակ (սովորական) - մինչև 1500 հատ, 2012թ. օգոստոսի 25-ից հոկտեմբերի 31-ը (10 հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ),

7) կեռնեխներ (սև կեռնեխ, սինակեռնեխ) - մինչև 1500 հատ, 2012թ. օգոստոսի 25-ից դեկտեմբերի 31-ը (10 հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ),

8) ջրլող թռչուններ՝ բադեր (կոնչան բադ, կարմրագլուխ սուզաբադ, սուլող և ճրճքան մրտիմներ) և ջրհովիվներ (փառփար, եղեգնահավ) - մինչև 7000 հատ 2012թ. սեպտեմբերի 15-ից 2013թ. փետրվարի 28-ը (3 հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ),

9) մոխրագույն ագռավ – մինչև 2000 հատ, 2012 թ. օգոստոսի 25-ից 2013թ. փետրվարի 28-ը,

10) կաչաղակ - մինչև 2000 հատ, 2012 թ. օգոստոսի 25-ից 2013 թ. փետրվարի 28-ը,

11) վայրի խոզ - մինչև 10 հատ, 2012թ. նոյեմբերի 1-ից 2013թ. փետրվարի 28-ը (1 հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ),

12) նապաստակ – մինչև 300 հատ, 2012թ. նոյեմբերի 1-ից 2013թ. հունվարի 31-ը (2 հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ),

13) աղվես – մինչև 300 հատ, 2012թ. նոյեմբերի 1-ից 2013թ. հունվարի 31-ը (10 հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ),

14) գայլ – մինչև 100 հատ, 2012 թ. օգոստոսի 25-ից 2013 թ. փետրվարի 28-ը,

15) շնագայլ - մինչև 200 հատ, 2012 թ. օգոստոսի 25-ից 2013 թ. փետրվարի 28-ը:

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալության պետին՝

կազմակերպել կենսառեսուրսների օգտագործման համար պայմանագրերի կնքումը ՀՀ կառավարության 2003 թվականի հուլիսի 7-ի «Կենդանական աշխարհի օբյեկտների՝ սոցիալական նպատակներով օգտագործման մասին պայմանագրերի կնքման կարգը հաստատելու մասին» N 884-Ն որոշման համաձայն:

3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության պետին՝

1) որսաշրջանի ընթացքում ապահովել կնքված պայմանագրերի հիման վրա տրվող սիրողական որսի կտրոնների տրամադրման գործընթացը ըստ մարզերի, հաշվառումը և անհրաժեշտ վերահսկողությունը՝ օրինախախտումները կանխելու նպատակով:

2) երկու շաբաթը մեկ ՀՀ բնապահպանության նախարարին ներկայացնել հաշվետվություն սիրողական որսի վերահսկողական աշխատանքների ընթացքի վերաբերյալ.

4. Մամլո քարտուղարին՝

ապահովել սույն հրամանի լուսաբանումը գանգվածային լրատվության միջոցներով:

5. Սույն հրամանի վերահսկողությունը վերապահում եմ ինձ:

ՆԱԽԱՐԱՐ  Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ